ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՄԻԴՌԵԶԱ ԿԱՄԻԱՐ

# ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԻՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**ԺԳ. 00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

## ՍԵՂՄԱԳԻՐ

**ԵՐԵՎԱՆ-2024**

**Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում**:

**Գիտական ղեկավար՝** մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ն. Կ. Հարությունյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ. Ա. Մարդոյան**
մանկավարժական գիտությունների թեկնածու **Ա.Տ. Մայիլյան**

**Առաջատար կազմակերպություն՝** Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ., հունվարի 17-ին ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, Երևան, Աբովյան 52ա, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 208 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է՝ 2024թ., դեկտեմբերի 18-ին:

Մանկավարժության 058 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ՝ **Ա.Փ. Ղազարյան**

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը**

Յուրաքանչյուր հասարակության զարգացումը և բարգավաճումը պայմանավորված են նրա մարդկային կապիտալի զարգացմամբ: Արդի աշխարհի գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական և մշակութային առաջընթացն իրականացվում է մարդկային գիտակից, արհեստավարժ և զարգացած ներուժի գործունեությամբ, այդ իսկ պատճառով երկրի բարգավաճման և արմատական բարեփոխումների համար պետք է ձևավորել կրթության արդյունավետ համակարգ, որը սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտների համար կպատրաստի կարողունակ ներուժ ունեցող կադրեր, ինչպես նաև կդաստիարակի այնպիսի մարդիկ, ովքեր, պահպանելով իրենց ազգային ինքնությունը, կկարողանան փոխգործակցել համաշխարհային հանրության հետ:

Մեծահասակների կրթությունը նշանակալից դեր ունի զարգացման գործընթացներում հասարակության լայն շերտերի լիարժեք մասնակցությունն ապահովելու և սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային փոփոխություններն ակտիվորեն վերահսկելու տեսակետից: Իրականում, ցանկացած կառուցողական փոփոխություն անհնար է իրականացնել առանց մեծահասակների կրթության ծրագրերի ներդրման, հատկապես, երրորդ աշխարհի երկրներում, որտեղ մարդկանց մեծամասնությունը չունի գիտական ու մասնագիտական բավարար կարողություններ:

Իրանը՝ որպես զարգացող երկիր, ելնելով 2005 թ. «Իրանի Բարգավաճման 20-ամյա հեռանկարային փաստաթղթի» դրույթներից, իր առջև խնդիր է դրել մինչև 2025 թվականը դառնալ զարգացած և առաջանցիկ երկիր տարածաշրջանում, որը պետք է ունենա զարգացած հասարակություն՝ մարդկային կարողունակ ռեսուրսներով և սոցիալական հարուստ կապիտալով: Այս համատեքստում Իրանի համար կրթության համակարգի զարգացումը դասվում է առաջնահերթություն և գերակա ուղղություն:

Իրանը 2009թ. Բրազիլիայի համագումարում հանձն էր առել ստեղծել մեծահասակների կրթության համակարգ, այդուհանդերձ մինչև հիմա չի ձևավորվել համապարփակ և միատարր համակարգ, կան բազմաթիվ խնդիրներ ու բացեր և դեռ չեն գրանցվել բավարար արդյունքներ, հետևաբար Իրանի մեծահասակների կրթության ուսումնասիրությունը և նրա խնդիրների ու բացթողումների վերհանումն անհրաժեշտ են իրանական հասարակության և կրթության համակարգի բարեփոխման և զարգացման համար, որով և պայմանավորված է սույն հետազոտության **թեմայի արդիականությունը:**

**Հետազոտության նպատակը**

Հետազոտության նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել մեծահասակների կրթության ներկա վիճակն ու պայմաններն Իրանում և վերլուծել այս ոլորտի խնդիրներն ու մարտահրավերները՝ առաջադրելով մեծահասակների կրթության բարելավման ուղիներ:

**Հետազոտության խնդիրները**

Ելնելով վերոնշյալ նպատակից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

**1.**Ուսումնասիրել Իրանի կրթության համակարգը, նրա նպատակները, խնդիրները, կառուցվածքը և գործառույթները:

**2.**Վերլուծել մեծահասակների կրթության նպատակները, գլխավոր հասկացությունները, սկզբունքները և առանձնահատկությունները:

**3.**Քննել մեծահասակների ուսուցման և կրթության վերաբերյալ Իրանում առկա մոտեցումները, կառուցակարգը և կազմակերպման ձևերը:

**4.**Քննել մեծահասակների կրթության ոլորտում Իրանի քաղաքականությունը և առաջնահերթությունները, կատարված աշխատանքները և ծրագրերը, ներկա վիճակը, խնդիրներն ու դժվարությունները:

**5.**Կազմակերպել սոցիոլոգիական հարցումներ Իրանի մեծահասակների կրթության խնդիրների վերաբերյալ, խմբավորել ստացված տվյալները և վերլուծել արդյունքները, առաջադրել ոլորտի բարելավման ուղիներ և միջոցներ:

**Հետազոտության գիտական նորույթը**

1.Սույն հետազոտությամբ համալիր կերպով վերլուծվել է մեծահասակների կրթության հիմնախնդիրն Իրանի կրթության համակարգում, և դիտարկվել են մեծահասակների կրթության ներկա վիճակը, քաղաքականությունը, նպատակները, խնդիրները և ուսումնական ծրագրերը:

2.Վեր են հանվել ու գնահատվել Իրանում մեծահասակների կրթության դժվարություններն ու մարտահրավերները, բացահայտվել են հիմնական թերությունները, առաջադրվել լուծման ուղիներ և բարելավման միջոցներ:

3.Հիմնախնդրի վերաբերյալ իրականացրած սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը հաստատեց հիմնախնդրի տեսական ուսումնասիրության արդյունքները:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները**

**1.**Մեծահասակների կրթության արդյունավետ կազմակերպումն ու զարգացումը կնպաստեն Իրանի մարդկային ներուժի աճին ու բարելավմանը և կխթանեն նրա սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը:

**2.**Մեծահասակների կրթության աշխատանքներն Իրանում դեռևս չեն արձանագրել ցանկալի արդյունքներ, առկա են բազմաթիվ խնդիրներ. կազմակերպչական հարցեր, մշտադիտարկման, վերահսկման ու գնահատման համալիր համակարգի բացը, աննպատակահարմար քաղաքականությունների որդեգրումը և մեծահասակների կրթության փիլիսոփայության անտեսումը:

**3.**Իրանում մեծահասակների կրթության, անգրագիտության կրճատման, ինչպես նաև շարունակական կրթության առավել բարձր արդյունավետության համար անհրաժեշտ են խորքային բարեփոխումներ կատարել այս ոլորտի քաղաքականությունների ու ռազմավարությունների մեջ՝ պլանավորման, կառավարման եղանակի, ուսուցման մեթոդների և թիրախային խմբերի առումով:

**4.** Մեծահասակների կրթության կառավարման կենտրոնացվածության նվազեցումն Իրանում, հանրային մասնակցության ապահովումը, տեղական ներուժի

և ռեսուրսների կարևորումը, ուսումնական ծրագրերի համապատասխանեցումը մեծահասակների կարիքներին և առանձնահատկություններին, մեծահասակների մոտիվացիաների և նախասիրությունների հաշվի առնումը կնպաստեն մեծահասակների կրթության հիմնախնդրի լուծմանը:

**Հետազոտության տեսական նշանակությունը**

Վերլուծվել են մեծահասակների կրթության առանձնահատկությունների տեսական հիմքերը՝ մեծաթիվ մասնագիտական գրականության ուսումնասիրմամբ տեսականորեն հիմնավորվել են նրա դերն ու նշանակությունն անձի և հասարակության համակողմանի զարգացման գործընթացում և սահմանվել են նրա տարբերակիչ կողմերը կրթության ֆորմալ համակարգից:

**Հետազոտության գործնական նշանակությունը**

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել Իրանի մեծահասակների կրթության նախագծերում և ծրագրերում: Հետազոտության եզրահանգումները կարող են օգտակար լինել այս ոլորտի պատասխանատուների, տնօրենների և ուսուցիչների, ինչպես նաև կառավարման, մանկավարժական և մեծահասակների կրթության փիլիսոփայության մասնագետների և ուսանողների համար:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, 26 աղյուսակից, 2 գծապատկերից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է 177 համակարգչային էջ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, առաջադիր խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը::

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «Իրանի կրթության համակարգը»** վերնագրով, ունի **4 ենթագլուխ**, որտեղ դիտարկվել են Իրանի կրթության համակարգի նպատակները և գործառույթները,զարգացման համառոտ պատմությունը, ներկայացվել են հանրակրթությունն ու բարձրագույն կրթությունն Իրանում:

Իրանի կրթության համակարգի ընդհանուր նպատակները խմբավորվել են հետևյալ ուղղություններով՝ գաղափարախոսական, բարոյական, գիտակրթական, մշակութային և գեղարվեստական, հասարակական, էկոլոգիական, առողջապահական, քաղաքական, տնտեսական, որոնք կրթության յուրաքանչյուր մակարդակում մանրամասնվում են:

Կրթության ֆորմալ համակարգի գլխավոր գործառույթներից են. հասարակության գրագիտության մակարդակի բարձրացում, հմտությունների ձևավորում և ընդլայնում, կրթության գերագույն նպատակների իրագործում,

տարբեր բնագավառներին անհրաժեշտ մարդկային ռեսուրսների կրթում և պատրաստում (կրթության տարբեր մակարդակների հասանելիության ապահովում սովորողների համար), կրթության իրավունքի հաստատում (կրթության համաչափ հասանելիություն հասարակության բոլոր անդամների համար):

Ներկայումս Իրանի կրթության ոլորտը կառավարվում է հետևյալ նախարարությունների և կազմակերպությունների կողմից.

**1.**Հանրակրթությունը գտնվում է Կրթադաստիարակության նախարարության տնօրինության տակ:

**2.**Բարձրագույն կրթության ոչ-բժշկական բոլոր ճյուղերը գտնվում են Գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության ենթակայության տակ:

**3.**Բարձրագույն կրթության բժշկական և անասնաբուժական ճյուղերը կառավարվում են Առողջապահության, բուժման և բժշկագիտության նախարարության կողմից:

**4.**Ոչ-պետական հատվածում և ոչ առևտրային կարգով կրթությունը իրականացվում է «Իսլամական Ազատ համալսարանի», ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտում գործող ոչ-շահադիտական այլ կազմակերպությունների միջոցով:

Աշխատանքի **երկրորդ գլուխը** կրում է **«Մեծահասակների կրթության առանձնահատկությունները»** վերնագիրը: Այն բաղկացած է **7 ենթագլխից**, որտեղ քննվել ու լուսաբանվել են մեծահասակների կրթության ոլորտի գլխավոր սահմանումները, վերլուծվել են նրա հիմնարար սկզբունքները, գործառույթները և մոտեցումները:

Յուրաքանչյուր հիմնախնդրին անդրադառնալիս, դրան առնչվող գլխավոր հասկացությունների սահմանումն անհրաժեշտ է ճիշտ ու հստակ ընկալում ձևավորելու, տարրմբռնումներից խուսափելու և հիմնահարցի տարբեր առանձնահատկությունները ճանաչելու համար, ուստի այս գլխում հանգամանորեն ուսումնասիրել ենք մեծահասակների կրթությանը տրված տարբեր ձևակերպումները, որպեսզի որոշարկենք մեծահասակների կրթության բազմակողմանիությունը: Ներկայացվել են այս ոլորտին առնչվող և լայն կիրառում ունեցող մի շարք եզրույթներ՝ անդրագոգիկա, ֆորմալ կրթություն, ոչ ֆորմալ կրթություն, շարունակական կրթություն և գրագիտություն կամ գրաճանաչություն:

Նշվել է, որ մեծահասակության, տարեց լինելու իմաստն ու ընկալումը համեմատական հասկացություններ են՝ պայմանավորված հասարակական-մշակութային և պատմական գործոններով ու մոտեցումներով: Այս համատեքստում դիտարկել ենք՝ ժամանակային տարիք, ֆիզիկական կամ կենսաբանական տարիք, հոգեկան-հուզազգացական տարիք և սոցիալական տարիք սահմանումները, ինչպես նաև նշել ենք մեծահասակների տարիքային խմբին բնորոշ մի շարք առանձնահատկություններ,այդ թվում նրանց մոտ առաջացող ֆիզիկական, ճանաչողական-կոգնիտիվ, հիշողության, ուշադրության, ստեղծարարության և նորարարության կարողության, ինչպես նաև հուզական և սոցիալական

փոփոխությունները, որոնք ուղղակիորեն ազդում են մեծահասակների ուսումնառության գործընթացի վրա:

Մեծահասակների ուսումնական ծրագրերը մշակելիս պետք է հաշվի առնել մեծահասակների ֆիզիկական, մտավոր, հուզազգացական առանձնահատկությունները, սոցիալ-տնտեսական պայմանները, ընտանեկան պարտականություններն ու պատասխանատվությունները, աշխատանքային ծանրաբեռնվածությունը, ժամանակի սղությունը, նրանց առաջնահերթությունները և հետաքրքրությունները, ստացած կրթության գործնական կիրառման հնարավորությունները՝ աշխատանք գտնելու կամ աշխատանքային առաջընթացի ուղղությամբ: Այս ծրագրերը պետք է ժամանակացույցի, տարիքային տարբեր խմբերի ներառման, դասընթացներին ընդունվելու համար պահանջվող պայմանների տեսակետից լինեն ճկուն,ինչպես նաև զուգակցվեն ու հարմարվեն մեծահասակների աշխատանքային պատասխանատվություններին:

Լուսաբանվել են մեծահասակների կրթության նպատակները, որոնք խմբավորվել են՝ քաղաքական, կրթական, սոցիալական, տնտեսական, կրոնական և գաղափարախոսական առումներով: Մեծահասակների կրթության հիմնական նպատակը մարդկանց զարգացումն ու կատարելագործումն է և միտված է նրանց անհատական ու հասարակական խնդիրների լուծմանը: Յուրաքանչյուր երկիր, հաշվի առնելով իր պատմամշակութային առանձնահատկությունները և կրթության համակարգի զարգացածության աստիճանը, որդեգրում է առանձին մոտեցում և ընտրում այս կամ այն գերակայությունը:

Առանձին ենթագլխում ներկայացվել է մեծահասակների կրթության կազմակերպման ուղին, միջազգային մակարդակով կայացած համագումարները և դրանցից ամեն մեկում արծարծված հիմնական առանցքները, ձեռքբերումները:

Ներկայումս մեծահասակների կրթությունն առաջավոր զարգացած երկրներում և թույլ զարգացած երկրներում ունի տարբեր շեշտվածություն և ուղղվածություն: Զարգացած երկրներում մեծահասակների կրթություն ասելով հիմնականում հասկանում են՝ շարունակական և ամբողջ կյանքում կրթությունը, գիտելիքահենք հասարակութան ձևավորումը, երիտասարդների և մեծահասակների (հատկապես կանանց) կրթությունը: Թույլ զարգացած երկրները մեծ մասամբ ունեն աղքատության և նրա պատճառած հետևանքների խնդիր, որոնք շատ հաճախ կենսական են, շուտափույթ լուծում պահանջող, հետևաբար այդ պետությունները չեն կարող ձեռնարկել մեծածախս, ոչ հրատապ և երկրորդական նշանակությամբ ուսումնական ծրագրեր, այլ իրականացնում են կրթական այնպիսի ծրագրեր, որոնք ունեն համազգային և համապետական նշանակություն, ինչպես օրինակ անգրագիտության կրճատումը:

Մեծահասակների կրթության կազմակերպումը, ելնելով տարբեր երկրների պայմաններից, ընդհանուր առմամբ երեք ձևով է իրականացվում. 1. Պետական կենտրոնացված կառույցի միջոցով 2.Ոչ կենտրոնացված կառույցի միջոցով 3.Մասամբ կենտրոնացված ձևով:

Իրանում մեծահասակների կրթության կազմակերպումը և կառավարումը կենտրոնացված բնույթ է կրում:

Ատենախոսության **երրորդ գլխի** վերնագիրն է **«Մեծահասակների կրթության կազմակերպումն Իրանում»:** Այն բաղկացած է **6 ենթագլխից,** որտեղ նախ տրվել է Իրանում գրագիտության և կրթության մակարդակի ընդհանուր պատկերը, այնուհետև խոսվել է մեծահասակների կրթության բնագավառում իրականացվող գլխավոր ծրագրերից ու քայլերից, այդ թվում ամենակարևոր ծրագրերից մեկի՝ անգրագիտության կրճատման և գրաճանաչման տարածման ուղղությամբ ձեռնարկվող ծրագրերից և դրանց ձախողման պատճառներից, բացատրվել են այս ուղղությամբ կյանքի կոչված առանձին կառույցի՝ «Գրագիտության ուսուցման շարժում» անունը կրող կազմակերպության, ձևավորումն Իրանում և նրա տարած աշխատանքները, վեր են հանվել առկա բացերը և խնդիրները, ներկայացվել են լուծման ուղիները:

Հաշվի առնելով անգրագիտության կրճատման առաջնահերթությունն Իրանում, այս գլխում լուսաբանվել են տարբեր ընկալումները գրաճանաչության և անգրագիտության մասին, նշվել են անգրագիտության տեսակները՝ գրել-կարդալու կարողությունից բացի, կարևորելով նաև մշակութային, գիտական, տեխնիկական, համակարգչային գրագիտության անհրաժեշտությունը ժամանակակից կյանքում:

Նշվել է, որ Իրանում մեծահասակների կրթության հիմնական շեշտադրումն ուղղված է հասարակության մեջ անգրագիտության կրճատմանն ու վերացմանը, այս նպատակով կազմվել է Անգրագիտության վերացման մասին գլխավոր փաստաթուղթ, որտեղ կարևորվել են Կրթության նախարարության, Գրագիտության շարժում կազմակերպության, պետական և մասնավոր բոլոր կառույցների և ներուժի համախմբումը: Նպատակ է դրվել նվազագույնի հասցնել անգրագիտությունը մինչև հիսուն տարեկան իրանցիների շրջանում, որպեսզի ամուր հենք պատրաստվի մեծահասակների կրթության առավել բարձր աստիճանին հասնելու համար:

Իրանում մեծահասակների կրթության և գրագիտության ոլորտի դժվարություններն ու մարտահրավերները կարելի է դիտարկել երեք տեսանկյունից՝ կառուցվածքային գործոններ, կառավարչական-ռազմավարական գործոններ և միջավայրի հետ կապված գործոններ:

Կառուցվածքային գործոններից կարևորվել է մեծահասակների կրթության փիլիսոփայության բացը, իսկ կառավարչական-ռազմավարական գործոններից նշվել են՝ աննպատակահարմար քաղաքականության որդեգրումը, աննպատակահարմար կազմակերպումը և կառուցակարգը, կենտրոնացված կառավարումը, մեծահասակների կրթության ծրագրերին առաջնահերթություն չտալը, միջգերատեսչական համագործակցության և ներգրավվածության պակասը, ինչպես նաև հատվածական, ոչ շարունակական ու ցրված ծրագրերը: Երրորդ խմբի գործոնները կապված են միջավայրին՝ մասնագետ ներուժի պակաս, ֆինանսական աղբյուրների դժվարություն, մեծահասակների տարբեր խմբերի աղքատության և ցածր եկամուտ ունենալու հարցը, Իրանի բնակչության մեծածավալ լինելը և ցրվածությունը, ինչպես նաև մեծահասակների անհատական խնդիրները՝ սովորելու

կարողունակության հարցը,հետաքրքրություն և մոտիվացիա ունենալու կարևորությունը, մեծահասակների կրթության մասին արդեն իսկ ձևավորված սխալ պատկերացումները և ընկալումները, ինքնավստահության պակասը, անձնական վախերը, հաշմանդամության դժվարությունները, ընտանեկան պարտավորություններով ծանրաբեռնված լինելը:

Ատենախոսության **չորրորդ գլխում,** որը վերնագրված է **«Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն»,** իրականացվել է հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն:

Տվյալների հավաքման առումով՝ սույն սոցիոլոգիական հետազոտությունը բնութագրական տեսակի է, իսկ նպատակի առումով՝ կիրառական: Հետազոտության գործիքը հարցաթերթն է՝ ուսումնասիրվող թեմային առնչվող հարցադրումներով: Հարցաթերթի հուսալիության ապահովման համար օգտվել ենք բովանդակային հավաստիության մեթոդից և դրա հիման վրա մշակել հարցաթերթում ներառված 10 հարցերը: Հարցաթերթի հավաստիությունը գնահատել ենք **Քրոնբախի ալֆայի** միջոցով և ստացել 0,87 մեծությունը: Այս թիվը վկայում է մշակված հարցերի հավաստիության լավ մակարդակի մասին:

**Սոցիոլոգիական հարցման բազայում** ներառված են Իրանի Խորասան Ռազավի նահանգի ուսումնական հաստատությունների տնօրեններ, դպրոցի ուսուցիչներ, բուհերի դասախոսներ, գրասենյակային աշխատողներ, մանկավարժական բուհերի ասպիրանտներ, ինչպես նաև գրագիտության դասընթացներում սովորողներ՝ աշխատավորներ: Նմուշ խմբի ծավալը որոշելու համար օգտվել ենք **Մորգանի աղյուսակից**, որի հիման վրա ստացվել է 384 թիվը: Հարցվողներն ընտրվել են պատահականության սկզբունքով: Լրացված հարցաթերթերի ընդհանուր թվից՝ **384 թերթիկից 342-ը** համարվել են հավաստի և ենթարկվել են վերջնական մշակման ու վերլուծության:

**Հարցաթերթում ներառված հարցերը բաժանվում են հետևյալ խմբերի՝**

●Թիվ 1,2,3,4,5,8 հարցերը գնահատում են հարցվածների տեղեկացվածության աստիճանը մեծահասակների կրթության և ցկյանս կրթության մասին:

●6-րդ հարցը քննում է մեծահասակների կողմից գրագիտության դասընթացներին ու ծրագրերին չմասնակցելու պատճառները:

●7-րդ հարցը անդրադառնում է Իրանում գրաճանաչության կամ գրագիտության ծրագրերի խնդիրներին:

●9-րդ հարցը որոշարկում է մեծահասակների կրթության ամենագլխավոր խնդիրը՝ հարցվածների տեսանկյունից:

●10-րդ հարցը քննում ու գնահատում է մասնակիցների ինքնակրթության և շարունակական կրթության խնդիրը:

***Սոցիոլոգիական հարցման մասնակիցների ժողովրդագրական տվյալները***

**Աղյուսակ 1. Սոցիոլոգիական հարցման մասնակիցների բաշխվածությունն՝ ըստ ամուսնական կարգավիճակի:**

| Ամուսնացած | Ամուրի | Ընդամենը |
|---|---|---|
| 312 | 30 | 342 |
| 91.2% | 8.8% | 100% |

**Աղյուսակ 2. Սոցիոլոգիական հարցման մասնակիցների բաշխվածությունն՝ ըստ տարիքային խմբի:**

| Տարիք | 40-45 | 46-50 | 51-55 | 56-60 | 60-ից բարձր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| **Քանակ** | 131 | 140 | 40 | 20 | 11 | 342 |
| **Տոկոս** | 38.3 % | 41% | 11.7 % | 5.8 % | 3.2 % | 100% |

**Աղյուսակ 3. Սոցիոլոգիական հարցման մասնակիցների բաշխվածությունն՝ ըստ սեռի:**

| Սեռ | Արական | Իգական | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Քանակ** | 216 | 126 | 342 |
| **Տոկոս** | 63.2% | 36.8% | 100% |

**Աղյուսակ 4. Սոցիոլոգիական հարցման մասնակիցների բաշխվածությունն՝ ըստ աշխատանքի:**

| Աշխա-տանք | Բան-վոր | Գրասեն-յակ. աշխա-տող | Դաստիարակ/ Ուսուցիչ/ Դասախոս | Տնօրեն | Ասպիրանտ | Ազատ ձեռներեց | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Քանակ** | 48 | 110 | 124 | 30 | 12 | 18 | 342 |
| **Տոկոս** | 14% | 32.2% | 36.3% | 8.8 % | 3.5% | 5.3% | 100% |

Սոցիոլոգիական հարցման հարցաշարի հարցերից ներկայացնում ենք չորսը՝ վերլուծելով ստացված պատասխանները.

**Հարցաշարի 3-րդ հարցը. Համաձայն Իրանի օրենքների՝ ո՞րն է պահանջվող նվազագույն շեմը գրագետ անձ համարվելու համար:**

**Աղյուսակ 8. Սոցիոլոգիական հարցման մասնակիցների պատասխանները հարցաշարի 3-րդ հարցին**

| Պատասխանի տարբերակներ | Քանակ | Տոկոս |
|---|---|---|
| ▪Գրագետ են համարվում այն անձինք, ովքեր կարողանում են գրել, կարդալ, հաշվարկել ու նաև ընթերցել Ղուրանը: | 66 | 19.3% |
| ▪Նրանք ունեն առնվազն տարրական դպրոցի չորրորդ դասարանի կրթություն: | 30 | 8.8% |
| ▪Նրանք, ովքեր կարողանում են միայն կարդալ: | 30 | 8.8% |
| ▪Նրանք, ովքեր կարողանում են գրել և կարդալ: | 216 | 63.2% |
| **Ընդամենը** | 342 | 100% |

Վերոբերյալ աղյուսակ 8-ում ամփոփված տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների 19.3%-ի համոզմամբ՝ գրագետ է համարվում այն անձը, ով կարողանում է գրել-կարդալ, գիտի թվաբանություն, ինչպես նաև Ղուրանի ընթերցանություն: Մասնակիցների 8.8%-ը գրագիտության նվազագույն շեմ է համարել տարրական դպրոցի չորրորդ դասարանի կրթությունը, մինչդեռ 8.8%-ի կարծիքով՝ միայն կարդալ իմացողին արդեն կարելի է համարել գրագետ անձ: Հարցվածների մեծամասնությունը՝ 63.2%-ը, գրել և կարդալու կարողությունն է նշել որպես գրագիտության նվազագույն պահանջ:

Այսպիսով, հարցվողների մեծամասնությունը սխալմամբ կարծում է, թե միայն գրել-կարդալ իմանալը բավական է գրագետ կոչվելու համար: Նկատի առնելով, որ ժամանակակից աշխարհում փոխվել ու ընդլայնվել է գրագիտության իմաստը, և ժամանակակից կյանքի զարգացումներին ու հրամայականներին հարմարվելու համար անհրաժեշտ են նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, հետևաբար պետք է փոխել գրագիտության մասին ձևավորված ընկալումները: Թերևս, այսպիսի ընկալումն էլ իր հերթին ազդեցություն է թողնում մեծահասակների կողմից կրթության դասընթացներին չմասնակցելու վրա, քանի որ նրանց մի մասը բավարարվում է իր տարրական գրաճանաչության մակարդակով:

Մեծահասակների կրթության պատասխանատուները պետք է մշակութային ու լուսավորչական աշխատանքներ տանեն այս ուղղությամբ և հասարակության տարբեր խավերին բացատրեն ցկյանս և շարունակական կրթության կարևորությունը, ինչպես նաև մեծահասակներին առաջարկեն բազմաբնույթ օգտակար դասընթացներ՝ ընձեռելով գրագիտության շեմի բարձրացման հնարավորություններ և ընտրության լայն շրջանակ:

**Հարցաշարի 4-րդ հարցը. Իրանում մեծահասակների կրթությունը հիմնականում ինչպիսի՞ ուսումնական ծրագրեր է ներառում:**

**Աղյուսակ 9. Սոցիոլոգիական հարցման մասնակիցների պատասխանները 4-րդ հարցին**

| Պատասխանի տարբերակներ | Քանակ | Տոկոս |
|---|---|---|
| ▪Մեծահասակների ֆորմալ կրթությունը միջնակարգ դպրոցից հետո: | 96 | 28.1% |
| ▪Ուսումն անավարտ թողած մարդկանց տրվող ֆորմալ կրթությունը: | 96 | 28.1% |
| ▪Ոչ ֆորմալ կրթություն, որին ներգրավվում են մեծահասակները: | 102 | 29.8% |
| ▪Գրաճանաչության ու գրագիտության տարածման ծրագրերը և դասընթացները: | 48 | 14% |
| **Ընդամենը** | 342 | 100% |

Ի պատասխան այս հարցի՝ հարցվածների 28.1%-ը նշել է միջնակարգ դպրոցից հետո տրվող ֆորմալ կրթությունը, մինչդեռ 28.1%-ը մատնանշել է՝ ուսումը կիսատ թողած մարդկանց տրվող ֆորմալ կրթությունը: Հարցվածների 29.8%-ի կարծիքով՝ մեծահասակների կրթությունը ոչ ֆորմալ կրթություն է, որին ներգրավվում են տարեցները, իսկ 14%-ն էլ կարծում է, որ մեծահասակների կրթությունը գրագիտության տարածման դասընթացներն ու ծրագրերն են:

Ինչպես նկատում ենք, հարցվածների մեծ մասը (29.8%) գրագիտությունից զատ մեծահասակների կրթության տարբեր հարթություններն ու կողմերն է համարում այս ոլորտի ուսումնական ծրագրերը, մինչդեռ Իրանում մեծահասակների կրթության ծրագրերը հիմնականում կենտրոնացված են գրաճանաչության ու գրագիտության տարածման վրա: Թերևս, սրանով է պայմանավորված հանրության ուշադրության ու հետաքրքրության նվազումը գրագիտության տարածման հիմնախնդրին, գրագիտության դասընթացներին: Այս դասընթացներն ինչ-որ տեղ սպառված են ընկալվում մարդկանց կողմից, այդ իսկ պատճառով նվազել է գրագիտության դասընթացներում ներգրավվածության աստիճանը:

Գրանցված արդյունքները խոսում են նաև մեծահասակների շրջանում ոչ ֆորմալ տարբեր տեսակի ուսուցողական դասընթացների պահանջի մասին: Սա նշանակում է, որ գրագիտության դասընթացների կողքին պետք է ուշադրություն դարձնել նաև մեծահասակների կրթության մյուս կողմերին, կարիքներին ու առաջնահերթություններին՝ առաջադրելով ուսումնական նոր ու բազմաբնույթ ծրագրեր: Թեև անգրագիտության վերացումը մեծ մարտահրավեր է զարգացող երկրների, այդ թվում Իրանի համար, և ուսումնական ծրագրերը հիմնականում այս առանցքի շուրջ են կազմվում, սակայն չպետք է անտեսել նաև մեծահասակների ուսումնական ծրագրերի բովանդակության, առարկաների ու թեմաների բազմազանությունը՝ մեծահասակների տարբեր խմբերի ու շերտերի կարիքներին համահունչ:

**Հարցաշարի 9-րդ հարցը. Որո՞նք են մեծահասակների կրթության ոլորտի հիմնական դժվարություններն ու խնդիրները:**

**Աղյուսակ 16. Սոցիոլոգիական հարցման մասնակիցների պատասխանները 9-րդ հարցին**

| Պատասխանի տարբերակներ | Քանակ | Տոկոս |
|---|---|---|
| ▪Մեծահասակների կրթության աննպատակահարմար կազմակերպումը և կառուցվածքը: | 252 | 16.8% |
| ▪Մեծահասակների կրթության ուսումնական ծրագրերի մշտադիտարկման, վերահսկման և գնահատման համալիր համակարգի պակասը: | 162 | 10.8% |
| ▪Աննպատակահարմար քաղաքականության որդեգրումը: | 150 | 10.0% |
| ▪Մեծահասակների կրթության փիլիսոփայության անտեսումը մեծահասակների կրթական պլանավորումներում: | 120 | 8.0% |
| ▪Պատկան մարմինների և կազմակերպությունների միջև համագործակցությունների և ներդաշնակության պակասը: | 108 | 7.2% |
| ▪Մեծահասակների ուսումնական ծրագրերում տարեց սովորողների ընդհանուր կարիքների և պահանջների չճանաչելը և չներառելը: | 108 | 7.2% |
| ▪Իրանի կրթության համակարգում մեծահասակների կրթության խնդիրներն առաջնահերթ ու գերակա չհամարելը: | 102 | 6.8% |
| ▪Ֆինանսական աղբյուրների պակասը մեծահասակների կրթական ծրագրերի հովանավորման համար: | 96 | 6.4% |
| ▪Մեծահասակների կրթական ծրագրերի աններդաշնակ ու ցրված գործադրումը: | 90 | 6.0% |
| ▪Իրանի անգրագետ բնակչության մեծաքանակ լինելը և նրանց աշխարհագրական ցրվածությունը երկրով մեկ: | 84 | 5.6% |
| ▪Դասընթացներին ներկա գտնվելու պահանջների ու կանոնների անհամապատասխանությունը տարեցների պայմաններին: | 66 | 4.4% |
| ▪Սովորողների սեռային, տարիքային և սոցիալ-մշակութային առանձնահատկությունների անտեսումը մեծահասակների կրթական ծրագրերում: | 66 | 4.4% |
| ▪Մասնագետ կադրերի և մարդուժի պակասն այս ոլորտում: | 54 | 3.6% |
| ▪Մեծահասակների կրթության պետական լինելը և խիստ կենտրոնացվածությունը: | 42 | 2.8% |
| **Ընդամենը** | 1500 | 100% |

Յուրաքանչյուր երկրի կրթության համակարգի կազմակերպումն ու կառուցվածքը մեծ ազդեցություն են ունենում կրթական արդյունքների վրա, քանի

որ յուրաքանչյուր համակարգ, գործի դնելով կրթական տարբեր ծրագրեր, նպատակներ, սկզբունքներ և քաղաքականություն, թողնում են տարբեր ազդեցություններ: Մեր կարծիքով, պատասխանների այս պատկերը՝ պայմանավորված է Իրանում մեծահասակների կրթության համապարփակ համակարգի ինստիտուցիոնալ չլինելով, ինչպես նաև այն հանգամանքով, որ մարդկանց մոտ հաճախ գրագիտության ծրագրերն են տպավորվել ու ընկալվել որպես մեծահասակների կրթություն: Մինչև այն ժամանակ, որ կառուցվածքային տեսակետից գրագիտության ծրագրերը չկարգավորվեն, հասարակության մոտ այս միջանկյալ, թերի ու ոչ համալիր ընկալումները կմնան:

Իրանի մարտահրավերներից մեկը երկրի կառավարչական ու իշխանական բուրգում քաղաքականության գիտական ու սկզբունքային մշակման համար գիտելիքների պակասն է: Նման գիտելիքները կարևոր գործիք և հայեցակարգ են կրթական քաղաքականություն մշակողների կողմնորոշման համար: Միայն կրթական քաղաքականությունը մշակող մասնագետը կարող է կայացնել համակարգված որոշումներ: Կրթական քաղաքականության արդյունավետ մշակման համար մեծ նշանակություն ունի մեծահասակների կրթության ուսումնական ծրագրերի մշտադիտարկման, վերահսկման և գտնահատման համալիր համակարգի առկայությունը, այդ իսկ պատճառով դրա բացը նշվել է հարցվողների կողմից՝ կարևորելով դրա անհրաժեշտությունը: Նշենք, որ Իրանի Իսլամական մեջլիսի հետազոտությունների կենտրոնը ևս 2023 թվին «Կրթության գնահատման համակարգի ցուցիչների ուսումնասիրությունը և դրանց հաշվարկման մարտահրավերը» վերտառությամբ զեկույցում անդրադարձել է այս խնդրին և երկու առանցք է կարևորել՝ արդյունքների չափում և ստանդարտներին հասնելու ուղղությամբ արվող քայլերի և ծրագրերի որոշարկում: Սակայն դեռ այս միտումները գործնականորեն չեն իրացվել ու ներդրվել Իրանի կրթության համակարգում:

**Հարցաշարի 10-րդ հարցը. Ինչպիսի՞ն են Ձեր ծրագրերը սեփական կրթության շարունակման ու համալրման համար:**

**Աղյուսակ 20. Սոցիոլոգիական հարցման մասնակիցների պատասխանները 10-րդ հարցին**

| Պատասխանի տարբերակներ | Քանակ | Տոկոս |
|---|---|---|
| **Ա.** Մասնակցություն վերապատրաստման և որակավորման դասընթացներին: | 59 | 17.3% |
| **Բ.** Մասնակցություն կարճաժամկետ հատուկ դասընթացներին: | 61 | 17.5% |
| **Գ.** Մասնակցություն սեփական աշխատանքին ու պրոֆեսիային առնչվող հատուկ դասընթացներին: | 76 | 22.3% |
| **Դ.** Կրթության շարունակությունն ավելի բարձր մակարդակներում: | 134 | 39.3% |
| **Ե.** Առանձնապես ոչ մի ծրագիր չունեմ: | 12 | 3.6% |
| **Ընդամենը** | 359 | 100% |

Ինչպես արտացոլված է արդյունքներում՝ սոցիարցման մասնակիցների 39.9%-ը նշել է կրթական ավելի բարձր մակարդակում սովորելու տարբերակը, իսկ մյուս տարբերակները հերթականությամբ հետևյալն են՝ մասնակցություն աշխատանքին ու պրոֆեսիային առնչվող հատուկ դասընթացներին (22.3%), մասնակցություն կարճաժամկետ հատուկ դասընթացներին (17.5%), մասնակցություն վերապատրաստման և որակավորման դասընթացներին (6.2%): Հարցվածների փոքր խումբը՝ 3.6%-ը միայն, ոչ մի ծրագիր չի նախատեսել իր կրթության համար:

Սոցիոլոգիական հարցման արդյունքները փաստեցին, որ ուսումնասիրվող համախմբի անդամների մեծամասնության (96.4%-ի) մոտ առկա է սովորելու ձգտումը: Մեր կարծիքով, հարցվածների մեծամասնության կողմից կրթական ավելի բարձր մակարդակում սովորելու տարբերակի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ սոցիալ-տնտեսական ու մշակութային տարբեր գործոնների ազդեցությամբ մարդկանց մոտ ձևավորվել է այն մտայնությունն ու մոտեցումը, թե կրթական բարձր ցենզը կարող է աշխատանքային ավելի հարմար կարգավիճակ և ավելի նպաստավոր պայմաններ ձեռք բերելու հնարավորություն ընձեռել:

Ընդգծում ենք, որ կրթության ոլորտում ամենահիմնական հարցերից մեկը կրթության փիլիսոփայություն ունենալն է: Կրթադաստիարակության այս կամ այն ուղղության մեջ կրթության որակը, նպատակների ու արժեքների ընտրության պատճառները և դրանց իրականացման համար կիրառվող մեթոդներն ածանցվում են փիլիսոփայական հայացքներից ու մոտեցումներից:

Յուրաքանչյուր կրթադաստիարակչական ծրագրի գործադրումից առաջ անհրաժեշտ է նախ հանգամանորեն ուսումնասիրել դրա տեսական հիմքերը և փիլիսոփայական սկզբունքները, այնուհետև որոշում կայացնել գործադրման վերաբերյալ: Կարծում ենք, որ Իրանում մեծահասակների կրթության ոլորտի ծրագրամշակման փիլիսոփայության բացը գլխավոր խնդիրներից է: Այս մասին է վկայում նաև Իրանի մշակութային հեղափոխության բարձրագույն խորհրդի կողմից 2011 թվականին ընդունված «Կրթադաստիարակության հիմնային վերափոխման մասին փաստաթուղթը», որտեղ տարիքային առանձին խումբ է նշվել՝ «մանուկներն ու պատանիները», և ասվում է, որ եթե որևէ տարիքային խումբ իր ճիշտ և համապատասան տարիքում չի ստանում կրթություն և դուրս է մնում կրթությունից, պետք է նրա համար կազմակերպել փոխլրացնող կրթություն, ինչպես մեծահասակների գրագիտության դասընթացները:

Ատենախոսության չորրորդ գլխի վերջում ներկայացվել են **առաջարկություններ** մեծահասակների կրթությունն Իրանում առավել բարձր մակարդակի հասցնելու և զարգացնելու ուղղությամբ, որոնք ամփոփ կերպով ներկայացնում ենք ստորև.

▪Վերանայել մեծահասակների կրթության ծրագրերի կազմակերպչական կառուցվածքը և խուսափել նույն գործառույթն ունեցող զուգահեռ կառույցներից:

▪Ներկայիս բյուրոկրատական և կենտրոնացված կառուցվածքը պետք է փոխել փոքրացված և մասամբ-կենտրոնացված կառուցվածքի:

▪ Մեծահասակների կրթության համար Ճիշտ և հարմար նպատակների սահմանում:

▪Հրաժարվել բազմակի զբաղվածություն ունեցող կառավարիչների նշանակումից:

▪ ՏՏ հնարավորությունների և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ընդգրկել Իրանի հեռավոր ու սոցիալապես անապահով շրջաններին, կանանց ու աղջիկներին, հաշմանդամներին, մեծահասակների տարբեր խմբերին, այսինքն ընդլայնել մեծահասակների կրթության միջակայքը և մոտիվացնել սովորողների տարբեր խմբերին:

▪Մասնավոր հատվածի հնարավորությունների առավել լայն օգտագործում:

▪Գնահատման և մշտադիտարկման արդյունավետ համակարգի համար ունենալ մեծահասակների տվյալների բազա, որտեղ հավաքվեն սովորողների մասին տարբեր տեղեկությունները (տարիք, սեռ, հաշմանդամություն, սոցիալ-տնտեսական կարգավիճակ և այլ անհրաժեշտ տվյալներ): Կիրառել գնահատման բնութագրական մեթոդներ (թղթապանակ, հարցազրույց, հմտությունների գնահատում և այլն):

▪ Մեծահասակների կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործում առավել նպատակահարմար են զրույցի և քննարկման, փորձարարական, պրոբլեմային ուսուցման և համագործակցային մեթոդները:

▪Ուսուցիչների կրթության և վերապատրաստման ծրագրերի բարելավում:

▪ Ուսուցիչների տնտեսական ու սոցիալական կարիքների կարևորում, ուսուցիչների բարեկեցության պայմանների ապահովում:

▪ Շարունակական և ցկյանս կրթության կարևորումը Իրանի կրթության համակարգում:

▪Հեռավար և վիրտուալ ուսուցման առավել ընդլայնում:

▪Մեծահասակների ընթերցանության համար նախատեսված հատուկ գրքերի, հանդեսների, աղբյուրների ներդրում և ընդլայնում:

▪Ուսումնական նպաստավոր միջավայրի նախագծում և պատրաստում մեծահասակների համար, քանի որ ներկայումս դրանք ավելի շուտ նախատեսված են պատանիների կրթության համար:

▪Ուսուցչի օգնականների ներգրավում և այդ հաստիքի ներդրում մեծահասակների կրթության համակարգում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1.** Մեծահասակների կրթության ծրագրերն Իրանում չեն իրականացվում կրթության ամբողջական և միատարր համակարգի ձևաչափով և չունեն հարկ եղած ներդաշնակությունն ու միասնությունը: Միայն անգրագիտության դեմ պայքարի ծրագրերն են, որ ունեն կազմակերպվածություն և պաշտոնական բնույթ::

**2.** Մեծահասակների գրագիտության և կրթության ծրագրերն ու աշխատանքներն Իրանում ընդհանուր և համակողմանի վերանայման ու բարեփոխման կարիք ունեն: Բարեփոխումները պետք է կատարվեն մի շարք ուղղություններով, թե՛ քանակական, թե՛ որակական առումներով, այդ թվում՝

**Ա.** Անհրաժեշտ է խուսափել զուգահեռ և համանման կառույցների ստեղծումից և բոլորը համախմբել մեկ միասնական կառավարման համակարգում:

**Բ.** Մեծահասակների կրթությունը պլանավորել երկու բաժիններով ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությամբ, որոնք պետք է կազմեն համապարփակ ամբողջություն:

**Գ.** Ծրագրերն իրականացնել մասամբ կենտրոնացված կառավարմամբ, ծրագրերի կազմակերպման ձևի ու կառուցվածքի մեջ փոփոխություններ մտցնել:

**3.** Իրանի մեծահասակների կրթության ոլորտում անհրաժեշտ է կիրառել գիտական և ռազմավարական կառավարման սկզբունքներ, հրաժարվել ոչ մասնագետ և բազմազբաղ կառավարիչներից ու տնօրեններից և ներգրավել մեծահասակների կրթության բոլոր շահակից կողմերին:

**4.** Մեծահասակների կրթական ծրագրերի շարունակական մշտադիտարկումը, տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա գնահատման և ստուգման վստահելի ու հավաստի համակարգի ներդրումը մեծապես կնպաստեն աշխատանքների արդյունքների ճշգրտմանն ու բարելավմանը:

**5.**Իրանում մեծահասակների կրթության մակարդակի բարձրացմանը և զարգացմանը կնպաստեն հետևյալ դրույթները՝ ցկյանս կրթության սկզբունքների կարևորումը, մեծահասակների և անգրագետների մոտիվացիաների ուժեղացումը սոցիալ-տնտեսական և մշակութային տարբեր ազդակներով, ստացած կրթության ամրապնդումը և համալրումը, ուսումնամեթոդական աղբյուրների հարստացումը, սովորողների տարբեր խմբերի կարիքներին համապատասխան կրթության կազմակերպումը:

**6.** Իրանի մեծահասակների կրթության որակի բարելավման համար օգտակար է կիրառել զարգացած երկրների փորձը՝ ուսուցման նորագույն և բազմազան մեթոդների կիրառման և ճկուն ծրագրերի գործադրման առումով, որպեսզի մեծահասակների և անգրագետների բոլոր խմբերը կարողանան համաչափ և արդարացի կերպով օգտվել ուսուցման հնարավորություններից և նվազագույն ժամանակով ու ծախսատարությամբ ստանալ կրթություն: Մեծահասակների կրթության հասանելիության համար նշանակալից դեր ունեն հեռավար և վիրտուալ ուսուցման մեթոդներն ու ծրագրերը:

**7.** Մեծահասակների կրթության կարևոր և ազդեցիկ սուբյեկտներից են այս ոլորտում աշխատող ուսուցիչներն ու դասախոսները, որոնք մեծ դեր ունեն

ուսումնական ծրագրերի որակական արդյունքների ապահովման գործում, ուստի անհրաժեշտ է նրանց համար կազմակերպել վերապատրաստման և որակավորման բարձրացման արդիական ու գործունակ ծրագրեր՝ նրանց կրթությունը համապատասխանեցնելով մեծահասակների տարիքային առանձնահատկություններին, նրանց կարիքների և առաջնահերթությունների բավարարմանը:

**8.** Սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփման հիման վրա, որոնք իրականում հաստատում են մեր հետազոտության տեսական դրույթները, կարելի է ասել, որ ներկայումս մեծահասակների կրթությունն Իրանում դեռևս չի գտնվում ցանկալի մակարդակի վրա և կարիք ունի առավել ուշադրության, բարենորոգման և բարեկարգման, մասնավորապես կազմակերպչական և կառուցվածքային ոլորտում, կրթական փիլիսոփայության մշակման առումով, ինչպես նաև մեծահասկաների կրթության տարբեր աշխատանքների միավորման ու համախմբման, մշտադիտարկման ու գնահատման համալիր համակարգի ձևավորման ուղղություններով:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**


**1.** Քամիար Հ., Մեծահասակների կրթությունն Իրանում, Մանկավարժական միտք, 3-4/2013, Երևան, էջ 199-203:

**2**. Քամիար Հ., Ի՞նչ է մեծահասակների կրթությունը, Կրթությունը և գիտությունը Արցախում 3-4/2014, Երևան, էջ 23-28:

**3.** Կամիար Հ., Մեծահասակների կրթության հիմնախնդիրներն Իրանում, Կրթությունը և գիտությունը Արցախում, 1-2/2018, Երևան, էջ 24-30:

**4.**Կամիար Հ., Մեծահասակների կրթության կազմակերպումն Իրանում, «Մխիթար Գոշ» գիտական և ուսումնամեթոդական հոդվածներ տարեգիրք 2018, Երևան, էջ 119-123:

**5**.Կամիար Հ., Մեծահասակների կրթության ռազմավարությունները, Գիտական Արցախ No 1(2), 2019, Երևան-2019, էջ 285-291:

**6.**Կամիար Հ., Մեծահասակների սովորելու կարողության ընկալման դերն ուսումնական ծրագրերին ու դասընթացներին մասնակցելու համար, Կրթությունը 21-րդ դարում, միջազգային գիտամեթոդական հանդես, Թիվ 2 (6)/2021, Երևան, էջ 233-239:

**7.** Կամիար Հ., Բարձրագույն կրթությունն Իրանում, Կրթությունը 21-րդ դարում, միջազգային գիտամեթոդական հանդես, Թիվ 2 (12)/2024, Երևան, էջ 175-181:

ХАМИДРЕЗА КАМИАР

# ПРОБЛЕМА ОБРАЗОВАНИЯ ВЗРОСЛЫХ В СИСТЕМЕ ОБРАЗОВАНИЯ ИРАНА

**Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00.01 - «Теория и история педагогики». Защита диссертации состоится 17 января 2025 года в 14:00 на заседании Специализированного совета 058 по Педагогике Комитета по высшему образованию и науке РА, действующем при Ереванском государственном университете.**

**Адрес: Республика Армения, 0025, г. Ереван, ул. Абовяна, 52а, 8-й корпус Ереванского государственного университета, аудитория №208.**

## РЕЗЮМЕ

**Актуальность темы**

Развитие и процветание каждого общества зависит от развития его человеческого капитала. Значительную роль в процессах развития с точки зрения обеспечения полноценного участия широких слоев общества и активного контроля социально-экономических, политических и культурных изменений играет образование взрослых. Фактически, без программ образования взрослых невозможно реализовать какие-либо конструктивные изменения, особенно в странах третьего мира, где большинство людей не имеют достаточных научных и профессиональных способностей. Изучение образования взрослых в Иране и освещение его проблем и пробелов необходимы для реформирования и развития иранского общества и системы образования, этим и обуславливается **актуальность данного исследования**.

**Цель исследования**

Цель исследования – тщательно изучить современное состояние и условия образования взрослых в Иране, проанализировать проблемы и вызовы этой области, предложить пути улучшения образования взрослых.

**Проблемы исследования**

Исходя из вышеизложенной цели, были поставлены следующие задачи.

1. Изучить систему образования Ирана, ее цели, задачи, структуру и функции.

2. Проанализировать цели, основные понятия, принципы и особенности образования взрослых.

3. Изучить действующие подходы, структуры и формы организации обучения и образования взрослых в Иране.

4. Изучить политику и приоритеты Ирана в области образования взрослых, выполненные работы и программы, текущую ситуацию, проблемы и трудности.

5. Организовать социологические опросы по проблемам образования взрослых в Иране, сгруппировать полученные данные и проанализировать результаты, предложить пути и средства улучшения сектора.

**Научная новизна исследования**

1. В данном исследовании комплексно проанализированы проблемы образования взрослых в системе образования Ирана, а также рассмотрено текущее состояние образования взрослых, политика, цели, проблемы и учебные программы.

2. Выявлены и оценены трудности и проблемы образования взрослых в Иране, выявлены основные недостатки и предложены пути и средства улучшения.

3. Анализ результатов социологических опросов, проведенных по проблеме, подтвердил результаты теоретического изучения проблемы.

**Теоретическая значимость исследования**

На основе изучения большого количества профессиональной литературы были проанализированы теоретические основы особенностей образования взрослых, теоретически обоснованы его роль и значение в процессе всестороннего развития человека и общества, а также определены отличительные черты по сравнению с формальной системой образования.

**Практическая значимость исследования**

Результаты исследования могут быть использованы в проектах ипрограммах образования взрослых в Иране. Выводы исследования могут быть полезны ответственным, директорам и преподавателям в этой области, а также специалистам и студентам философии менеджмента, педагогики и образования взрослых.

**Структура и объем диссертации**

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, 26 таблиц, 2 диаграмм, списка использованной литературы и приложения: Объем диссертации составляет 177 компьютерных страниц.

HAMIDREZA KAMIAR

# THE ISSUE OF ADULT EDUCATION IN IRAN'S EDUCATION SYSTEM

The dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences in the specialty 13.00.01 - "Theory and History of Pedagogy" will be defended on January 17, 2025, at 14:00 at the session of the Specialized Council 058 on Pedagogy of the Committee on Higher Education and Science of the Republic of Armenia, operating at Yerevan State University.

Address: Republic of Armenia, 0025, Yerevan, Abovyan St. 52a, 8th building of Yerevan State University, room 208.

## SUMMARY

**Relevance of the topic**

The development and prosperity of every society depends on the development of its human capital. Adult education plays a significant role in the development process from the point of view of ensuring the full participation of the broad segments of society and actively controlling socio-economic, political and cultural changes. In fact, any constructive change is impossible to implement without adult education programs, especially in third world countries, where most people do not have sufficient scientific and professional abilities. The study of Iran's adult education and the highlighting of its problems and gaps are necessary for reform and development of Iranian society and education system, due to which the topicality of this research topic is determined.

**The aim of the research**

The aim of the research is to systematically study the current state and conditions of adult education in Iran and analyze the problems and challenges of this field, proposing ways to improve adult education.

**Tasks of the research**

Based on the above-mentioned goal, the following tasks have been set.

1. To study the Iranian education system, its goals, objectives, structure and functions.
2. To analyze the goals, main concepts, principles and features of adult education.
3. To examine the approaches, structures and forms of organization in Iran regarding adult learning and education.
4. To examine Iran's policy and priorities in the field of adult education, the work and programs carried out, the current state, problems and difficulties.

5. To organize sociological surveys on the problems of adult education in Iran, to group the data obtained and analyze the results, to propose ways and means of improving the sector.

**Scientific novelty of the research**

1. This research comprehensively analyzed the problems of adult education in Iran's education system, and examined the current state of adult education, policies, goals, problems and curricula.

2. The difficulties and challenges of adult education in Iran have been identified and evaluated, the main shortcomings have been identified, and ways and means of improvement have been suggested.

3. The analysis of the results from the sociological surveys conducted on the issue confirmed the results of the theoretical study of the problem.

**The theoretical significance of research**

Based on the study of a large amount of professional literature, the theoretical foundations of the features of adult education were analyzed. Its role and significance in the process of comprehensive development of individuals and society were theoretically justified, and its distinguishing characteristics compared to the formal education system were identified.

**The practical significance of research**

The results of the research can be used in Iran's adult education projects and programs. The research conclusions can be useful for managers, directors and teachers of this field, as well as management, pedagogical and adult education philosophy specialists and students.

**The structure and volume of the dissertation**

The dissertation consists of an introduction, four chapters, conclusions, 26 tables, 2 diagrams, a list of used literature and an appendix. The volume of the dissertation is 177 computer pages.